

The Armenian Center  
for National and International Studies

Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոն

Армянский центр стратегических и  
национальных исследований

**ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոնի փորձագետ*

**ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ:**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ «ՀԵՐՈՍ»  
ՀԱՄԱՐԿՈՂ ԿԵՐՊԱՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ**

29 ապրիլի 2010թ.  
Երևան

Ներկայացված տեսակետները միմիայն անհատ հոդվածագիրներինն են, և կարող են չհամընկնել կենտրոնի դիրքորոշումների հետ:

© 2010, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:  
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրատարակումը առանց ՌԱՀԿ-ի գրավոր թույլտվության արգելվում է:

© 2010, Армянский центр стратегических и национальных исследований.  
Публикация статьи или отдельных ее частей без письменного разрешения АЦНИ запрещена.

© 2010, Armenian Center for National and International Studies.  
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

## ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ «ՀԵՐՈՍ» ՀԱՄԱՐԿՈՂ ԿԵՐՊԱՐԻ  
ԳՈՐԾԱԾՈՒՄԸ

*Տվեք ինձ մեկ Ղեւոնդ, եւ ես Ձեզ հազարավոր  
վարդաններ կգտնեմ....*

### **Ծեղենց**

Քաղաքականության մեջ կարեւորագույն դեր եւ տեղ ունեն քաղաքական տեխնոլոգիաները: Դրանք գործիք են հասարակական կարծիքի ձեւավորման եւ մանիպուլիացիայի համար՝ գործողություններ, որոնք ավելի արդյունավետ են դարձնում իշխանության համար պայքարին մասնակցող քաղաքական կազմակերպությունների, խմբերի աշխատանքները:

Քաղաքական տեխնոլոգիաները բազմաթիվ սոցիալ-հոգեբանական տարրեր են պարունակում: Ամենաազդեցիկ բաղադրիչներից են «ազգային» առանձնահատկություններն ու ազգային խորհրդանիշերը: Այդ խորհրդանիշերի գործածումը երաշխիք է քաղաքական գովազդի արդյունավետության համար, քանի որ խորհրդանիշային տարրերն ավելի համոզիչ ու վստահելի են դարձնում «քաղաքական տեղեկատվությունը» եւ խթանում դրա իրացմանը: Ազգային երաժշտական հնչյուններն իրենց հերթին ենթագիտակցական հուզական վերաբերմունք են ձեւավորում դեպի «գովազդվող» թեկնածուի անձի հատկանիշները: Ազդեցության տարրերից են նաեւ գույները. ազգային կոլորիտային գույները ենթագիտակցական առավելություն ունեն «դատարկ» գույների նկատմամբ, որոնք իրենց մեջ տվյալ ազգի համար տեղեկատվություն չեն պարունակում:

Սակայն ավելի հաստատուն եւ ծանրակշիռ տարրերը ազգի պատմությունից մնացած վառ իրադարձություններն են, այդ իրադարձությունների միջով անցած մարդիկ, որոնք ազգային, հասարակական, պատմական, մշակութային արժեք են ստանում եւ դարերի, տարիների կտրվածքում մնում են որպէս ազգի հերոսներ կամ առասպելված անձինք: Պատմիչների կողմից ներկայացված մի շարք կերպարներ, որոնք ազգի պատմամշակութային հիմքն են՝ իրենց տեսակով ու նկարագրված գոյությամբ ազգի հոգեւոր համախմբման գործոններից են:

Քաղաքական գործչի հաջողության գրավականներից է՝ ընդգրկել իր կերպարում հատկանիշներ՝ ուսումնասիրելով հերոսներին եւ առասպելված անձանց, ժամանակային կողմը հաշվի առնելով՝ կերտել համապատասխան ընդունելի եւ հաջողված կերպար: Կերպարները միանշանակ դրական կամ բացասական չեն, դրանք ներառում են որոշակի հատկանիշների ամբողջություն, յուրահատուկ կողմեր, ինչ-որ առանձնահատկություններ, հոգեկան ուժեր, որոնք անձնավորում են ստանում այդ հերոսի կերպարի մեջ: Այդ յուրահատկություններից երբեմն կարող են լինել «թերի», անհաջող գծեր, որոնք ժամանակի մեջ ոչ թե խուճանում են, այլ կազմում են նաեւ ազգի հոգեկերտվածքի մի մասը. ազգը եւս հակվածություն ունի որեւէ ծայրահեղ գծի կամ որեւէ հատուկ հոգեբանական շեղվածության: «20-րդ դարասկզբին Գերմանիայում Յունգի կողմից նկարագրված դեպքերի զարգացումը պատմական եւ հոգեբանական գործոնների փոխգործունեության ողբերգական օրինակ է: Ըստ նրա, նման առանձին անձանց, ռասսաներին եւ ցեղերին՝ ազգերին եւս բնութագրական է իր սեփական հատուկ հոգեբանությունը, եւ դրա հետ մեկտեղ նաեւ առանձնահատուկ հոգեպաթոլոգիան»<sup>1</sup>: Այդ հոգեպաթոլոգիան ենթադրում է, որ

<sup>1</sup> Одайник В., «Психология политики», Ювента 1996, стр. 30

որել է գաղափար կամ գաղափարախոսություն, հերոսի տեսակ ավելի «ապրվող» է մի ազգի մեջ եւ մերժվող մեկ այլ ազգի կողմից:

## **«ՀԵՐՈՍԻ» ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԱԶԳԵՐԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ**

Ազգային պատկանելության խորհրդանիշերը կարելու են ամուր «հասարակության» համար: Հասարակության միասնականության համար կարելու ազգային բնութագրիչ գործոն է հոգեւոր աշխարհի ընդհանրությունը: **Ըստ Լեւոնի**, անցյալ փուլ է էթնիկական հիմքը, կարելու է գեղարվեստական հարազատությունը, երբ հոգեւոր աշխարհն է ընդհանուր, ապա կա միասնություն՝ դա ամենահզոր միասնությունն է: Իհարկե, այստեղ կա հակասության, եթե հիշենք Յունգին, քանի որ գեղարվեստական հարազատությունը, հոգեւոր միասնականության զգացողությունը **ազգի հավաքական անգիտակցականով է պայմանավորված**: Այսինքն՝ նույն էթնիկ հիմքով զանգվածը կարող է ունենալ հոգեկան հարազատություն՝ ամբողջական պատմության եւ առասպելների հիման վրա աճած, անգիտակցականում նույն տեղեկատվությամբ:

Ճշմարտություն է նաեւ, որ առհասարակ **ազրեսիան մեծ է հոգեւոր տարբերության մեջ**: **Կարող ենք ունենալ նաեւ ներտեսակային ազրեսիա, որն ավելի «ժամանակավոր» եւ պակաս կայուն խորհրդանիշերի, արժեքների հետ կարող է պայմանավորված լինել**: Ինչպես որ լեզուն խորհրդանշական երանգներ ունի, նույն լեզվով կարելի է խոսել եւ չհասկանալ (խորհրդանիշերն են տարբեր, որոնք գալիս են միկրոշրջապատից), այնպես էլ տարբեր առասպելների, հերոսների «առկայությունը» տարբեր է ընկալմամբ, երբ ի սկզբանե իրենց գործառույթը չեն կատարել այդ խորհրդանիշ-հերոսները:

Բնականաբար, հասարակության միասնության համար կարելու է առասպելների եւ «հերոսների» ընդհանրությունը. երբ հասարակությունը հոգեւոր գաղափարական հայացքներով է ընդհանուր, ապա միասնություն կա մի շարք կերպարների առումով եւ հակառակը, **որի փոքր մասշտաբով տարբերակը կարող ենք դիտել քաղաքականության մեջ**: Ընտրությունների ժամանակ կան թեկնածուներ, որոնք դառնում են ժամանակավոր «հերոսներ»: Մարդիկ՝ կազմելով այս կամ այն «հերոսի» ընտրազանգվածը, «ժամանակավոր» «թշնամություն» եւ ազրեսիա են տածում հասարակության մյուս մասի նկատմամբ՝ մյուս թեկնածուի նկատմամբ, եւ **որքան ավելի ներգրավված են թեկնածուների գաղափարախոսությամբ, գաղափարական հատվածով, այնքան ազրեսիան ավելի մեծ է դիմացինի «ճամբարի» նկատմամբ**: Դրանք հերոսներ են՝ կուռքի նման, որ կարճատեւ են, մոռացվում են նոր կուռքի գալով, ջնջվում է հիմը, նորը բերում է ժողովրդի ոգին:

Ավելի համապատասխան գնահատելու եւ հասարակական քաղաքական ոլորտում հանդես գալու համար գործչին անհրաժեշտ է հաշվի նստել այնպիսի տեղեկությունների հետ, ինչպիսիք են՝ **ինչ հերոսներ եւ ինչպիսի վարքային խորհրդանիշերով են տվյալ ժողովրդին կառավարել, ովքեր են հերոսները, այդ զանգվածի հուզական եւ ենթագիտակցական պաշարը, ինչպիսի վարքագիծն է համարվում հերոսական**:

Ներկա հասարակության մեջ հոգեւոր միասնականությունը դրսեւորվում է պատմական մի շարք հերոսներին ընկալելու առանձնահատկությունների նմանությամբ, ընդհանրությամբ: Վերջին, ժամանակային առումով «ամենամոտ» հերոսները, հերոսական վարքագիծը, որոնց նկատմամբ գրեթե միանշանակ ընկալում եւ վերաբերմունք կա որպես հերոսի եւ արարքի՝ Արցախյան պատերազմի ազատամարտիկներն են<sup>2</sup>: Եվ կան նոր հերոսներ, որոնց նկատմամբ հասարակության մեջ հակվածություն կա դեպի առասպելացվածության «տանելու»:

<sup>2</sup> ըստ «Անավարտ նախադասություններ» թեսթի վերլուծության

2006թ. մայիս, օգոստոս եւ նոյեմբեր ամիսներին, ինչպես նաեւ 2007-ին ամերիկյան հեղինակավոր ԳԵԼԱՊ կազմակերպության «Բալթյան հարցումներ» ընկերությունը ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի պատվերով եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացրել է հանրային կարծիքի ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունների շրջանակներում արվել է նաեւ բաց հարցում՝ «**Հայ ժողովրդի նշանավոր մարդկանցից, հայոց պատմության ու ժողովրդական մշակույթի կերպարներից ո՞վ է ներկայումս ազգային հերոս կամ առաջնորդ լինելու համար առավել հարմար**» ձեւակերպմամբ: Հարցումների արդյունքներով ուշագրավ է այն, որ հիմնական 1-6-րդ վարկանիշային սանդղակները զբաղեցրած հերոսները այդ տարբեր ամիսների հարցումներին գտնվել են նույն խմբի մեջ՝ վեցյակում միայն փոխելով տոկոսային հարաբերություններով իրենց դիրքերը: Ըստ ցուցանիշների, «մեր ժամանակներից» կան երկու անձինք՝ Վազգեն Սարգսյան եւ Կարեն Դեմիրճյան: Մյուս չորսը՝ հիմնականում անցյալի հերոսներ են՝ Անդրանիկ, Գարեգին Նժդեհ, Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան: Առաջին եւ երկրորդ հորիզոնականները գրեթե միշտ կիսում են Վազգեն Սարգսյան եւ Անդրանիկ կերպարները: Վերլուծելով այս կերպարները կամ կերպարների վերաբերյալ ստեղծված առասպելները, կարող ենք պատկերացում կազմել ոչ միայն ներկա ժամանակահատվածի հայ ժողովրդի, այլ նաեւ առաջնորդից «հասարակության» պահանջմունքի մասին: Եթե ըստ կատեգորիաների դիտարկենք, ապա բոլոր կերպարները խարիզմատիկ են, վեցից հինգը՝ ռազմահայրենասիրական ոճ ունեն եւ միայն Կարեն Դեմիրճյանն է, որի ընկալման առանձնահատկությունը «շինարարն» է: Հետաքրքրաշարժ է այն, որ պատմական ժամանակագրության առումով վակուում կա նշված հերոսների միջեւ. մի դեպքում մինչեւ չորրորդ դարի հերոսներն են հիշատակվում, մյուս դեպքում՝ սկսած 20-րդ դարից, կարծես ազգի պատմական հիշողության «սեւ խոռոչ»:

#### **ՀԵՐՈՍ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԿԵՐՊԱՐԱՍԵՂԾՄԱՆԸ ՊԱՅԱՆՁՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կերպարաստեղծը իր թեկնածուի անձնային հատկանիշների ուսումնասիրության վրա պետք է կառուցի մարտավարությունը. որքանով է տվյալ անձը իր գիտելիքներով, իր խառնվածքով համապատասխանում տվյալ ժամանակահատվածում այն առասպելացված կերպարներին, հերոսներին, որոնք ազդեցիկ են եւ իդեալականացված: Կերպարի մեջ պետք է ուժեղացնել կամ գորշացնել թեկնածուի գոյություն ունեցող առանձնահատկությունները՝ ըստ ստեղծվող կերպարի պահանջմունքի եւ նույնականացման: Համարվում է, որ քաղաքական գործչի կերպարում ավելի կարեւոր գծեր են անձի բացառիկությունը, ինքնավստահությունը եւ իր գործի նկատմամբ վստահությունը, ուժը, հասարակությանը ծառայողի դիրքը, մարդկանց նկատմամբ հոգատարությունը, նրանց խնդիրների մասին լավ տեղեկացվածությունը, կյանքը բարելավելու ձգտումը, խանդավառությունը, ակտիվությունը, լավատեսությունը, դրական հույզեր առաջացնելու կարողությունը, վճռականությունը, եռանդը, կամքը, բարձր բարոյական հատկանիշները, մարդկանց վրա ազդելու ունակությունը: Ամերիկյան ժամանակակից քաղաքական գովազդում կարեւոր են համարվում քաղաքական գործչի երեք բնութագրիչները՝ **բարձր ինտելեկտը** (լայն գիտելիքներ, փայլուն կրթությունից մինչեւ ուժեղ ինտուիցյա եւ առողջ միտք), **մեծ ներուժը** (անձի ուժը, վճռականությունը, նպատակաուղղվածությունը, եռանդը, կամքը) եւ **բարոյական հատկանիշները** (արդարություն, հավատարմություն խոսքին): Ռուսական քաղաքական գործչի համար շեշտադրումը երեք գործոնների վրա է՝ **անձ** (խարիզմա, ուղղվածություն, ինտելեկտ, բարոյականություն), **հարաբերություններ** (երկրին, ազգին, կուսակիցներին, ինքն իրեն), **վարք եւ գործունեություն** (առաջնորդ, ինչպես արտակարգ պահերին, այնպես էլ առօրյա կյանքում): Լինում են սակայն եւ համեմատաբար ավելի բարդ կերպարային մոդելներ:

«1996թ. Ռուսաստանի նախագահական ընտրություններից առաջ գեներալ Լեբեդի կերպարը ստեղծվել էր վեց հիմնական չափանիշներով.

1. մոտ չէր ոչ Ելցինին, ոչ Ջյուզանովին, հանդես էր գալիս որպես «3-րդ ուժ»,
2. հակակոմունիստ էր, պայքարում էր կոմունիստների եւ կոմունիզմի դեմ,
3. գեներալ էր, նշանակում է ռազմական բարեփոխումներ կանցկացնի,
4. խիստ եւ արդարացի է, կպատժի բոլորին, ով մասնակցել է երկրի եւ ազգի կողոպուտին,
5. ազնիվ է, չունի վարկաբեկիչ անցյալ,
6. հայրենասեր է, պայքարում է Արեւմուտքի բացասական ազդեցությունների դեմ:

Միաժամանակ Լեբեդի կերպարի վրա աշխատանքը ներառում էր նրան բնորոշ մի շարք թերությունների «դիմակավորում»: Այդպիսիք էին՝

1. ավտորիտարիզմ
2. ազգայնամոլություն
3. աշխարհում չճանաչվածություն
4. պետական կառավարման փորձի բացակայություն
5. ուժային մեթոդների հակվածություն
6. կուսակցական աջակցության բացակայություն
7. ռազմասարտադյունաբերական համալիրի հետ կապեր:

Մեծ ռեսուրսների եւ քրտնաջան աշխատանքի արդյունքում ծնվեց հայրենասերի բավականին հմայիչ կերպար՝ «զինվորի հայր», որը եւ երրորդ տեղը զբաղեցրեց քվեարկության արդյունքում»<sup>3</sup>:

Հասարակության տարբեր շերտերի համար գոյություն ունեն տարբեր առասպելներ եւ խորհրդանիշեր: Ամենաընդհանուր եւ ունիվերսալ առասպելները քաղաքակրթության անբաժանելի մասն են եւ մնում են անփոփոխ ու հանրամատչելի շատ հազարամյակների ընթացքում: Վստահորեն կարելի է ասել, որ քաղաքակրթության ամենաիշխող առասպելներից մեկը սկսած անտիկ ժամանակներից **իմաստուն եւ համարձակ զորավարի առասպելն է, որն էլ ներկայացնում է իդեալական առաջնորդի կերպարը:** Այդ պատկերացումը ձեւավորվում է ոչ թե իրականության պահանջների վերլուծության հիմքում, այլ ավելի շուտ մարդկանց հոգեբանական պահանջմունքների հիման վրա: Մարդկանց համար անհրաժեշտ է, որ աշխարհում գոյություն ունենա անձ, որն իր վրա կվերցնի իրադարձությունների ընթացքի կարգավորումն ու պատասխանատվությունը, կպաշտպանի թշնամիներից ու վտանգներից, կտանի դեպի բարեկեցիկ կյանք, վառ ապագա: Բոլոր այս ցանկություններն ու պահանջմունքները առասպելներ են առաջացնում այն մասին, որ գոյություն ունեն «մեծ առաջնորդներ», որոնք իմաստուն, հաղթական, արդար եւ մեծահոգի են բարեկամների, յուրայինների եւ հետեւորդների հետ, բայց անողոք են թշնամիների, օտարների նկատմամբ, ընդունակ են հաղթահարել ցանկացած դժվարություն, ի վերջո հավատարիմ են եւ նվիրված ազգին: Եւ ԳԵԼԱԴ-ի, եւ հոգեբանական թեսթավորման արդյունքում ստացված պատկերը հիմնականում ոչ միայն հաստատում է վերոնշյալ միտքը, այլեւ բացատրվում է նրանով:

Հայաստանում 1990-ականներին առավել «հմայիչը» զինվորական համազգեստով խարիզմատիկ, հիմնականում չսափրված հերոսների կերպարներն էին, իսկ 90-ականների կեսերից՝ Ղարաբաղյան պատերազմի զինադադարից հետո, քաղաքական գործչին ներկայացվող հասարակական «պահանջը» որոշակիորեն սկսեց փոխվել.

<sup>3</sup> Ольшевский Д., Политическая психология, Питер 2002, стр. 551-552

խարիզմատիկ, ավտորիտար, ավելի «գրագետ» եւ արդեն ճերմակ օձիգով, կառավարման հմտություն դրսեւորող ուժեղ եւ վստահելի կերպար, որը միեւնույն է՝ ցանկալի էր, որ ունենար ռազմական ոլորտի հետ անմիջական առնչություն: Այս ամենը թերեւս տեսնում էին Վազգեն Սարգսյան կերպարում, որը նաեւ «խիստ էր եւ արդարացի»: Խորհրդային Միության փլուզումից հետո եւ 1988-ին սկսված շարժումը պիտի հանգեր պետության հռչակմանը եւ բանակի կազմավորմանը, որը ֆիդայական շրջանի ավարտն էր: Վազգեն Սարգսյանն ընկալվում էր անմիջական մասնակից անձ թե ֆիդայական շարժման մեջ՝ որպէս «վերջին ֆիդայի», եւ թե որպէս «առաջին գինվոր»: Մի դեպքում ամենամոտ «ազատագրական հաղթանակած պատերազմի» մարտիկ, եւ խարիզմատիկ ռազմական առաջնորդ, «բանակաշեն» Սպարապետ: «Այն, ինչ արեց Վազգեն Սարգսյանը, ոչ պակաս կարելու էր, քան մեր զորքերի դաշտում արձանագրածը: Հետեւաբար՝ Վ.Սարգսյանը եթե սպարապետ է, ապա սպարապետ է քաղաքական իմաստով, եւ պետք չէ նրա այդ արժանիքները ձեւախեղել՝ Վազգենից «կռված տղու» կերպար կերտելով, մանավանդ որ Վ.Սարգսյանը, որպէս ռազմական գործիչ, մեղմ ասած, հաջողությունների չի հասել, եւ այդ կտրվածքով նրա մասին շրջանառվող բանահյուսությունը չափազանցված է:

Այո, մեծ էր Վ.Սարգսյանի դերը մահապարտների համախմբման, կռվողների ոգու բարձրացման եւ բանակաշինության գործում: Իսկ հիմնական եւ անուրանալի դերակատարումն այն է, որ նա չթողեց, որ ռազմի դաշտում ձեռք բերած հաղթանակները ջուրը լցվեն փուլային հանձնումների տարբերակով: Սա է նրա պատմական եւ քաղաքական կարեւորագույն դերը նորանկախ Հայաստանում»<sup>4</sup>: Քանի որ **Վ.Սարգսյանը** նշված հերոսներից առավել, քան որեւէ մեկը մեր **ժամանակակիցն** է, շատ **տարատեսակ կարծիքներ** կարող ենք վկայաբերել՝ ամենադրական եւ վեհից մինչեւ բացասական ու անընդունելի: Սակայն կերպարը, որ նստած է որպէս առաջնորդ հերոս, գրեթե մեծամասնության շրջանում նույն զուգորդություններն ունեն: Այստեղ նախ՝ ազգի կողմից պաշտպանական մեխանիզմի գործածումն է, պարտադիր է, որ այս պատերազմը պատմության մեջ, բացի կռվող անձնվեր մարտիկներից, ունենա եւ ժողովրդին տա նաեւ մեկ կամ երկու վառ կերպարներ: Այդ գործառույթը շատ կարելու է թե պատմական, թե մշակութային առումներով, բայց նաեւ «իրավիճակային» նշանակությամբ: Պատերազմում հաղթանակը պիտի ունենա խորհրդանիշեր, միավորող կերպարներ եւ հավատ դեպի անձ-հերոսը: Այդ կերպարների նեղ ուսումնասիրությունը շատերին պետք չէ, ավելորդ է: Ըստ Լեբոնի, զանգվածը ձգտում է խաբկանքի՝ «զանգվածը երբեք չի ձգտում ճշմարտության, նա շրջվում է իրեն դուր չեկած ակնհայտից և գերադասում խոնարհվել մոլորությանը, որը գայթակղում է նրան»: Ինչպէս թատրոնի ֆենոմենը կա՝ խաբկանքի հիման վրա, կա եւ մեկին հերոսացնելու, մարդկանցից աստվածացնելու խաբկանքը, որպէսզի կարողանալ ընդունել եւ դարձնել հերոսական ու կատարել սոցիալ-հոգեբանական շատ կարելու գործառույթ՝ հերոս թողել ազգին:

### **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍԹԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

ԳԵԼԱՊ-ի ուսումնասիրությունն ունենալով որպէս քանակական տվյալներ, անհրաժեշտություն կար ուսումնասիրել «որակական» կողմը՝ մի քիչ տարբեր ձեւակերպումներով. արդյոք ի՞նչ են հասկանում հերոս հասկացության մեջ, ի՞նչ առաջնահերթություններ, նկարագիր ունի հերոս վարքագիծը, ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի առասպելացված հերոսը, որի համար անցկացվեց հոգեբանական պրոյեկտիվ թեսթ:

<sup>4</sup> Անդրանիկ Թեւանյան <http://www.7or.am/hy/news/2010-03-22/12322/>

Հոգեբանական պրոյեկտիվ թեսթը դուրս բերեց այն հիմնական կերպարները, որոնք քանակական սոցիոլոգիական հարցումն էր առանձնացրել՝ մի փոքր տարբերությամբ: Սակայն ուշագրավ է, որ հիմնական հարցերում եւ պատմա-մշակութային ընկալումներում տարիքային փուլերի մոտ ընկալման իդենտիֆիկացիան՝ նույնականացումը նույնն է: Հիմնականում հերոսությունը Ղարաբաղյան պատերազմի ազատամարտիկների հետ է կապվում, այսինքն՝ այս վերջին պատմական իրողությունը մաքրում եւ նորովի է արժեքավորում թեկուզ հին հերոսներին, քանի որ հաղթանակ կա այդ պատերազմում:

«Անավարտ նախադասություններ»<sup>5</sup> թեսթն օգտագործելով որպես նախատիպ հոգեբանական նույն սկզբունքներով կառուցած քաղաքական ոլորտն ուսումնասիրող թեսթը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու անձի *քաղաքական պատկերացումները*, բացահայտելու ուսումնասիրվողի վերաբերմունքը այս կամ այն քաղաքական երեւոյթի, քաղաքական կերպարների, հերոս-անձի, կերպարի վերաբերյալ, որում արտացոլված է ոչ միայն իր անձնական վերաբերմունքը, այլ նաեւ յուրովի արտահայտում է *ռեֆերենտ սոցիալական խմբի արժեքները, դիրքորոշումները*, որոնք կրում է: Այսինքն՝ անհատական վերլուծությունը եւս թույլ է տալիս «իր տողատակերում» տեսնել որոշակի զանգվածի մոտեցումներ, քանզի մեզ հետաքրքրող երեւոյթը՝ անձի քաղաքական աշխարհայացքը՝ քաղաքական դաստիարակության, քաղաքական կոնֆորմիզմի արդյունքներից է: Ըստ այդմ՝ հետազոտման օբյեկտ ընտրելիս սկզբունքը եղել է հոգեբանական *կարծրատիպային մոտեցումը*, այսինքն՝ ընդգրկվել են պայմանականորեն առանձնացված տարիքային երեք խմբեր (20-28տ., 29-40տ., 41-55 տ.), հոգեբանական տարբեր տիպեր, երկու սեռերի ներկայացուցիչներ, տարբեր կրթությամբ անձինք<sup>6</sup>: Բոլոր նախադասությունները՝ համապատասխան բանալու բաժանվում են սանդղակների, որից հետո կատարվում է յուրաքանչյուր նախադասության վերլուծություն:

## 1. ՀԵՐՈՍՆԵՐ

Վերլուծությամբ առանձնանում են այն կատեգորիաները, որոնք դուրս են բերված՝

1. Քաղաքական կերպար
2. Հերոսի իդեալ (կատարելատիպ)
3. Պատմական հերոս, առասպելացված անձ
4. Անձ-հերոս, դեպի առասպել

Ըստ թեսթի արդյունքների (առանց դրական կամ բացասական համատեքստի) ամենաշատ հիշատակված քաղաքական կերպարն են՝ Տիգրան Սարգսյան, Րաֆֆի Հովհաննիսյան, Սերժ Սարգսյան, Ռոբերտ Քոչարյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, ավելի


<sup>5</sup> Գոյություն ունի «Անավարտ նախադասություններ» թեսթ՝ առաջարկված Սակսոմի եւ Լեւիի կողմից: Թեսթը կազմված է 60 անավարտ նախադասություններից, որոնք բաժանված են 15 սանդղակի՝ յուրաքանչյուրը չորսական նախադասությամբ: Յուրաքանչյուր նախադասության եւ սանդղակի հոգեբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու անձի ուղղվածությունը, փոխհարաբերությունները մարդկանց, շրջապատի հետ եւ վերաբերմունքների տեսակները: Պատկանում է հոգեբանական պրոյեկտիվ թեսթերի շարքին:

<sup>6</sup> Նախքան բուն հետազոտական խմբին ներկայացնելը՝ թեսթը փորձարկվել է մի քանի փուլերով, ստուգվել՝ «աշխատո՞ւմ է» թե՛ ոչ.

1. արդյոք վե՞ր է հանում նպատակադրված այն տեղեկանյութը, որն ակնկալվում է
2. արդյոք «իր կառուցվածքով» հասկանալի, մատչելի եւ ընկալունա՞կ է փորձարկվողին
3. արդյոք սանդղակներն «օգնո՞ւմ են» միմյանց, լրացնո՞ւմ են միմյանց բովանդակային եւ տեղեկատվական առումով:


քիչ՝ Պարույր Չայրիկյան, Գագիկ Ծառուկյան, Վարդան Օսկանյան, Վլ. Պուտին եւ մի շարք՝ մեկական անգամ նշված կերպարներ:

### 1. Քաղաքական կերպար




Պատկերը ներառում է երեք խմբերի ամփոփ արդյունքները: Այստեղ ուշագրավ փաստն այն է, որ բոլոր տարիքային խմբերում կան գրեթե նույն քաղաքական գործիչների հիշատակումը (ըստ թեսթի՝ բարձր ցուցանիշով գործիչների մասին է խոսքը), բացառությամբ Պարույր Չայրիկյանի, որին միայն տարիքային ամենաբարձր խումբն է նշել՝ 41-55տ.:

### 2. Հերոսի կատարելատիպ (իդեալ)



Ուսումնասիրության արդյունքների համաձայն հերոսի կատարելատիպ են՝ Անդրանիկ, Վարդան Մամիկոնյան, Գարեգին Նժդեհ, Արաբո, Տիգրան Մեծ, Մովսես Խորենացի, Յուրայի Դինք, Դավիթ Բեկ, Պարույր Սեւակ, Գեորգ Չաուշ, Սողոմոն Թեխլերյան, Շավարշ Կարապետյան, Մարշալ Բաղրամյան, Նելսոն Ստեփանյան եւ ֆիդայիներ:

### 3. Պատմական հերոս, առասպելացված անձ




Հիմնականում կան պատմական արդեն առասպելացված հերոսներ, որոնց շարքում ամենամեծ վարկանիշներն ունեն Տիգրան Մեծ եւ Վարդան Մամիկոնյան կերպարները: Պատմական ուշագրավ կերպարներից, որպես առասպելացված անձինք հաջորդաբար նշվում են Մեսրոպ Մաշտոց, Տրդատ Գ, Անդրանիկ, Նժդեհ, Գ.Չաուշ, Մովսես Խորենացի, Մխիթար Սպարապետ, Գրիգոր Լուսավորիչ: Առասպելացված հերոսների մեծամասնությունը առաջնորդ-զինվորականի կերպարն է: Նշված մյուս կերպարներն են՝ կրոնական եւ մշակութային, որոնք եւս ազգապահպան գործունեության վրա են առասպելացված: Եթե դիտարկենք «առասպելացվածության» հիմքերն ու «զաղափարական» կողմը, ապա Վարդան Մամիկոնյանը քրիստոնյա ուսմունքի վրա է առասպելացվել, Տիգրան Մեծը՝ տարածքների, հզոր Հայաստան ստեղծելու: Արաբոն առաջին հայ ֆիդային է համարվում, որն իր կյանքով ծնունդ տվեց էլի հարյուրավորների: Նժդեհը հայրենասիրության, հայրենատիրության, ազգային մտածողության հերոսական մարմնացումն է, ըստ թողած ժառանգության՝ կենդանի հերոս, ռազմական գործիչ: Դավիթ Բեկը ազատագրական շարժման հերոս է, Սողոմոն Թեխլերյանը որպես ազգային շահի յուրովի պաշտպան: Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Գ քրիստոնյա ուսմունքի հիմնադիրներն են եւ իրենց առասպելացվածությամբ ամրապնդել են ուսմունքի տարածումը եւ պահպանմանն ուղղված ոտնձգությունները: Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին ազգային ինքնության հիմքում կանգնած առասպելացված հերոսներ են:

Առհասարակ բանակը եւ եկեղեցին խորհրդանիշ են՝ ժողովրդին, զանգվածները կառավարելու եւ երկիրը պահելու: Ակնհայտ է, որ հիմնական հերոսները ինչպես

զինվորականներ են, այնպես էլ՝ կրոնի հետ առնչվող հերոս-կերպարներ, որոնք կրկին պատմության մեջ ազգապահպան եւ հայրենատիրական հատկանիշներով են հայտնի եւ առասպելացված: Ըստ Ֆրեյդի, եկեղեցին եւ բանակը արիեստական զանգվածներ են, որոնցում անհրաժեշտ են ստիպողականությունը եւ ճնշումը՝ դրանք փլուզումից եւ կառուցվածքային փոփոխություններից պահպանելու համար: «Եկեղեցում, ինչպես նաեւ բանակում, որքան էլ նրանք տարբեր լինեն՝ պաշտամունքային է նույն խաբուսիկ, կեղծ պատկերացումը, որ գոյություն ունի բարձրագույն իշխող մեկը՝ տիրակալը (կաթոլիկ եկեղեցում Քրիստոսը, բանակում՝ հրամանատարը), ով զանգվածի յուրաքանչյուր անդամին սիրում է հավասարապես: Այդ պատրանքի վրա հիմնվում է ամեն ինչ եւ պահպանվում են այդ երկու զանգվածները, եթե այն հանենք, կքանդվի ամեն բան նույն րոպեին:

Ոչ մի կասկած չկա, որ եկեղեցու յուրաքանչյուր անդամի կապը Քրիստոսի հետ համարվում է միաժամանակ պատճառ՝ զանգվածի անդամների միջեւ կապերի: Նույնը վերաբերում է եւ բանակին, հրամանատարը՝ հայր է, որը միակերպ սիրում է իր բոլոր զինվորներին, եւ դրա համար նրանք ընկերներ են»<sup>7</sup>: Այս սոսնձող գաղափարը մեծ նշանակությամբ է իր գործառույթը կատարում: Հերոսը նման կառույցներից է «ծնվում», որտեղ կա հիերարխիա եւ հարաբերությունների մեջ գործունեություն, համեմատություն, հետազայում՝ ընտրություն:

#### 4. Անձ, հերոս դեպի առասպել



Ուշագրավ է այն հերոսների ցանկը, որոնք ժամանակի ընթացքում առասպելացվելու միտումներով են ընկալված: Նրանք հիմնականում մեր ժամանակակիցն են կամ ոչ շատ վաղ անցյալի «ներկայացուցիչներ»: Այսինքն՝ 20-րդ /մասամբ 21/ դարի ազգի պատմությունն ու բնութագրումը կարող ենք տալ ըստ նշված անձանց, որոնք եւ մարտիկներ են, եւ հերոս-անհատներ, նաեւ խաղաղ ժամանակաշրջանի ազգային շահի պաշտպաններ են (Սողոմոն Թեհլերյան, Ջրանտ Դինք), մշակույթի անձինք (Շառլ Ազնավուր, Արմեն Ջիգարիսյան), Վազգեն Առաջին՝ հոգեւոր կրոնական վերականգնման եւ «վերածննդի» խորհրդանիշ, Կարեն Դեմիրճյան՝ Խորհրդային

<sup>7</sup> Фрейд З. Психоаналитические этюды, Психология масс и анализ человеческого Я, стр. 440-441

Հայաստանի ամենանշանավոր եւ հիշատակվող քաղաքական անձը, որի անունը երեւանի կառուցման հետ է զուգորդվում:

Դուրս բերված կատեգորիաներից՝ հերոսներից, առասպելացված անձանցից, քաղաքական կերպարներից կարող ենք առանձնացնել հերոսների հետեւյալ տեսակները՝

1. Ռազմահայրենասիրական (*Անդրանիկ, Գարեգին Նժդեհ, Տիգրան Մեծ*)
2. Մշակութային (*Մեսրոպ Մաշտոց, Խորենացի, Պ.Սեւակ, Շ.Ազնավուր*)
3. Կրոնական (*Գրիգոր Լուսավորիչ, Վազգեն Ա, Տրդատ Գ*)
4. Սոցիալական (*Գ.Ծառուկյան, Ռ.Յիրիկյան*)

Առասպելացված անձը կամ հերոսը մեծ նշանակություն ունի ոչ միայն հավաքական իմաստով, այլ նաեւ անհատական մակարդակում, անհատի կյանքում: Նա հոգեթերապևտիկ առումով կարելի է գործառույթ է իրականացնում: Ցանկացած հերոս՝ լինի մշակութային անձ, մարզիկ թե պատերազմի մասնակից, սովորական, ոչնչով աչքի չընկնող անհատին հնարավորություն է «տալիս» ձգտումներով ապրելու եւ հուսալու, որ կարող է իր հետ կրկնվել այդ պատմությունը. բնականաբար դիմանալ, չհուսահատվել կյանքում իր զբաղեցրած դիրքից, իրենից ներկայացվող արժեքից: «Յուրաքանչյուր հերոս կրկնել է արխետիպային գործողություն, յուրաքանչյուր պատերազմ վերականգնել է պայքարը բարու եւ չարի միջեւ, յուրաքանչյուր նոր սոցիալական անարդարություն նույնականացել է փրկչի տառապանքների հետ: Մեզ համար նշանակություն ունի մեկ բան: Շնորհիվ այդպիսի մոտեցման տասնյակ միլիոնավոր մարդիկ հարյուրամյակների ընթացքում կարողացել են պատմության հզոր ճնշմանը դիմակայել՝ չընկնելով հուսահատության, ինքնասպանության հոգեկան «զայթակողության» մեջ»<sup>8</sup>:

Ժամանակակից առասպելն այնպիսի ձեւեր է ընդունում, որոնք միանգամայն կենցաղային իրադարձություններ են նկարագրում: Դրա հետ մեկտեղ նա շատ բանով ակտիվորեն հենվում է իրականության մեջ ներդրած ոչ տիպիկ իրավիճակների վրա: Որպես օրինակ՝ Գ.Ծառուկյանի պատմությունը. բարեհաջող առաջընթացը որպես միլիոնատեր հենվում է բոլորին հայտնի առասպելական կառուցվածքի վրա, անցումը՝ փոխակերպումը այլ իրավիճակի, որի տարբերակը կարող է ծառայել բոլորին հայտնի Մոխրոտը: Մոխրոտի մասին առասպելը նույնական է միլիոնատեր դարձած կոշիկ մաքրողի հետ, որը նաեւ անհաշվելի թվով կրկնվում է, օրինակ, օլիմպիադայում հաղթողի հետ՝ խուլ գյուղից: Այսինքն՝ ունենք առասպելական իրականություն, որին բարենպաստ է զանգվածային գիտակցությունը, քանի որ այս իրականության բոլոր հերոսները հաղթում են շնորհիվ իրենց աշխատանքի ու ընդունակության՝ չնայած իրենց ցածր սոցիալական դիրքին: Առասպելական գծապատկերի այդ ազատ կրկնությունը տարբեր ժողովուրդների մոտ եւ տարբեր ժամանակներում խոսում է նրա սկզբունքային բազմակողմանիության մասին:

## 2. ՀԵՐՈՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ

Վերլուծելով թեսթի նախադասությունները՝ հերոսական արարքը, վարքագիծը ընկալում են հետեւյալ դիտանկյուններով՝ սոցիալական, հայրենասիրական եւ արժանապատվության: Հետաքրքրական է, որ «հերոսական արարքը» մեծամասամբ դիտարկել են որպես արժանապատվության պահպանում՝ սոցիալական, հայրենասիրական, այն դեպքում, երբ հերոսների մեծ մասը տոկոսային հարաբերությամբ ռազմահայրենասիրական բնույթի է: Այսինքն՝ հերոսական արարքի

<sup>8</sup> Елиаде М. Космос и история, М., 1987, стр. 135

բնույթը մարդիկ դիտարկում են ավելի առօրեական՝ ներկայի եւ ապագայի համար, հասարակության մեջ «գոյության» արժանապատիվ կեցության եւ պայքարի համատեքստում: Հերոսական վարքագծի պատասխաններում՝ հարցվողները իդեալական «ես»-ի սահմաններում են բնութագրել այն, քան օրինակ՝ հերոսներ թվարկելուց, երբ անցյալի եւ իրենցից շատ հեռու կերպարներ են մատնանշել: Այսինքն՝ եթե անցյալում երկրի ներսում եւ դրսում մարտահրավերները մեզ համար շոշափելի են առասպելացված անձանց միջոցով, ապա **ներկա մարտահրավերները մարդիկ առաջին հերթին ներհասարակական եւ անհատական մակարդակով են դիտարկում:** Թերեւս հերոսական վարքագծի սոցիալականացվածությունը մարդկանց կողմից բարդութափոխվածության եւ «աշխարհի հետ» կոնֆլիկտի, պայքարի արտահայտումն է:

Վերլուծությունից դուրս բերված վարքագծի կատեգորիաները եւս կարելի է բաժանել մի քանի ուղղվածության՝

#### 1. Սոցիալական

- 1.1 սոցիալական արդարություն
- 1.2 սոցիալական հումանիզմ
- 1.3 նեղ անձնային սոցիալական ուղղվածություն
- 1.4 հումանիզմ

#### 2. Հայրենասիրական

- 2.1 ռազմա-հայրենասիրական ուղղվածություն
- 2.2 ռազմական պաշտպանություն

#### 3. Արժանապատվություն

- 3.1 հայրենասիրական արժանապատվություն
- 3.2 սոցիալական արժանապատվություն

Օրինակներ՝ «**Հերոսությունն այն է...**» կիսատ նախադասությունն ավարտել են՝ **Հերոսությունն այն է, ով կարողանում է սատար կանգնել թույլերին** (սոցիալական արդարություն եւ հումանիզմ):

**Հերոսությունն այն է, որ պատվով ես դուրս գալիս յուրաքանչյուր դրությունից** (սոցիալական արժանապատվություն):

**Հերոսությունն այն է, որ կռվեցին հանուն հայրենիքի** (ռազմահայրենասիրական ուղղվածություն):

**Մեր ժամանակներում հերոսներ են նրանք, ովքեր ապրում եւ աշխատում են հայրենիքում, դիմակայում են շատ դժվարությունների** (հայրենասիրական եւ սոցիալական արժանապատվություն):

**Մեր ժամանակներում հերոսներ են նրանք, ովքեր չեն վախենում դեմ դուրս գալ ստին ու խաբեությանը** (սոցիալական արդարություն, սոցիալական արժանապատվություն):

**Մեր ժամանակներում հերոսներ են նրանք, ովքեր օգտակար են դառնում ամենաքիչը 100 մարդու համար** (սոցիալական հումանիզմ):

### 3. ՀԵՐՈՍԻ ԿԱՏԱՐԵԼԱՏԻՊԻ (ԻԴԵԱԼԻ) ՎԱՐՔԱԳԻԾ

Հերոսի կատարելատիպի վարքագծի հատկանիշներն են՝ հայրենասիրություն, անվախություն, արդարություն, ճշտախոսություն, գործին նվիրվածություն, կամավոր արարք, անկեղծություն, իրենց գործին լավ ծառայելը, հանուն ճշմարտության պայքարելը՝ թե զենքով, թե գաղափարով:

#### 4. ՀԵՐՈՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ՝ ԴԵՊԻ ԱՌԱՍՊԵԼԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հերոսական վարքագծի դրսևորումը, որը դեպի առասպելացվածություն է տանում, հատուկ է Արցախի հերոսներին, ազատամարտիկներին, ազատագրման պատերազմի մասնակիցներին, կռվողներին: **Նաեւ այն անձանց, ովքեր խաղաղ ժամանակներում պայքարում են հայրենիքի բարգավաճման համար, անձնվեր են, քաջ, խելացի, հայրենիքին նվիրված:**

---

Առասպելների ազդեցությունը մեծ է ժամանակակից քաղաքականության մեջ: Երբ քաղաքական հաղորդակցման մեջ այս կամ այն առաջնորդն իրեն ներկայացնում է որպես «ամենայն» եւ առասպելական հերոսի որակներ է ցուցադրում, նա դրանով իսկ շարժառիթ է տալիս, որին ակնթարթորեն արձագանքում է հասարակությունը, ընդունում է **առաջնորդի՝ հրամայելու անառարկելի իրավունքը, իսկ իր համար՝ լռակյաց ենթարկվելը, հնազանդվելը:** Ջանգվածը համոզված է, որ դա հենց այն առաջնորդն է, որն իրեն պետք է, այսինքն՝ այն նույն ամենափրկչի գաղափարը գործում է վերը նշված վերլուծության եղանակով:

Բոլոր հզոր առաջնորդներին հատուկ է եղել, որ նրանք ստեղծել են կրոնական, քաղաքական կամ որեւէ գործի հզոր հավատք, գաղափարախոսություն: Կարելորդ գաղափարն է, որը պարտադիր չէ, որ լինի դրական, այնքան, որ կերպարը գա՛ փշրի, զավթի, կոտորի եւ ազատի ինչ-որ լծից եւ հերոսանա. դա Սասունցի Դավթի, Տիգրան Մեծի, Անդրանիկի կերպարն է: Սովորաբար զանգվածների առաջնորդները չեն պատկանում մտածողների թվին, նրանք գործի մարդիկ են: Նրանք խորաթափանցության չեն տիրապետում, քանի որ այն տանում է կասկածների ու անգործության:

Լավ քաղաքական գործիչ լինելու համար անհրաժեշտ է ամենից առաջ համապատասխանել պահի պահանջներին, գործել ըստ իրավիճակի եւ ծայրահեղությունների մեջ չընկնել: Սակայն որպեսզի թվալ այդպիսին եւ համապատասխանել առասպելական կանոններին, առաջնորդը պետք է ցուցադրի վառ արտահայտված, մշտական որակների շարք, որոնք չեն փոփոխվում բոլոր ժամանակների եւ պայմանների համար: Առաջնորդի կերպարի կառուցումը ենթադրում է հասարակության գիտակցությունը լցնել հենց այդպիսի առասպելական որակներով:

Ներկայումս քաղաքական կերպարներն իրենց «հերոսական վարքագծի առանձնահատկություններով» ինչ-որ տեղ պետք է հակասեն վերոնշյալ հերոսներին, քաղաքակրթական այլ մակարդակի նկարագրությամբ, արժեհամակարգի եւ ժողովրդավար մտադրությունների առանձնահատկություններով: Այս տարաբաժանումը յուրաքանչյուր անձի մեջ է, ներանձնային կոնֆլիկտ (հակադրություն) է, ինչպես նաեւ այս ժամանակահատվածում՝ հասարակության մեջ: Այն թաքնված հակադրություն է իրականի, առասպելի եւ իդեալականի միջեւ: Իրականությունն այն է՝ ինչ ունենք, առասպելը՝ ուժն է, հաղթանակը, խարիզման, իդեալականը՝ զարգացած երկրներին ինտեգրվելու համար այլախոհ եւ խելացի, ժողովրդավար ղեկավարը:

Պատմական մեծ իրադարձությունները միշտ նպաստել են առաջնորդների համբավին, քանի որ այն պահերին, երբ երկրին եւ ազգին վտանգ է սպառնում, առաջնորդը հնարավորություն է ստանում ցուցադրել վճռական գործողություններ: Այդպիսի գործողություններ նախաձեռնող քաղաքական գործիչը ազգի աչքում դառնում է հերոս եւ իր ժամանակի նշանավոր գործիչ: Ակտիվությունն, իհարկե, կաշխատի ապահովված հասարակության համար, սակայն մեր հասարակության համար նախագահի ակտիվությունը պետք է արդյունավետ լինի: Ունայնական ակտիվությունն ի վերջո բերում է իշխանությունների դեմ ժողովրդի պայքարին: Այդ պայքարը լինում է ակտիվ եւ պասիվ: Այժմ Հայաստանի պայմաններում իշխանության դեմ ժողովրդի պայքարն ընթանում է պասիվ պայքարի ճանապարհով, այն է՝ զանգվածային արտագաղթ, փախուստ հայրենիքից: Իսկ հասարակության աչքում չկա ավելի մեծ մեղք առաջնորդի կողմից, քան իր իշխանության ոչ լրիվ օգտագործումը:

### ***Արմինե Ղազարյան***

*Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոնի փորձագետ*